ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4426-Ա « 30 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ՇՐՋԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ Հ.2/21 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱԿՈԲ ԺՈՐԺԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ, ՎԱՐԴԱՆ ՀՈՎՍԵՓԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հակոբ Ժորժի Ղարիբյանի (ծնված 01.09.1962թ.), Վարդան Հովսեփի Ղարիբյանի (ծնված 25.01.1973թ.)դիմումը:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 23.05.2023թ. հ.ԱՏ-23052023-01-0761 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 14.08.2023թ. հ.Հ-10212 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 05.08.2025թ. հ.20-Էլ-126949 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շրջանային փողոց հ.2/21 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շրջանային փողոց հ.2/21 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հակոբ Ժորժի Ղարիբյանի, Վարդան Հովսեփի Ղարիբյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 156.1քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 156.1քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Շրջանային փողոց հ.2/21 հասցեում գտնվող 156.1քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Շրջանային փողոց հ.2 հասցեի բնակելի տանը տրամադրել «Շրջանային փողոց հ.2/21» հասցեն:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ